

մատուցել չափաւորութեամբ հանգարտեցընել լատինի ժողովրդոց վրէժխնդրութեան ոգին, որոնք Հռոմայեցւոց յաղթութիւնները ուրիշ բան չէին սեպեր՝ բայց եթէ յաջողեալ յափշտակութիւններ: Ինքը իր զարմանքով լցուած հպատակներուն սորվեցուց՝ որ քաջութենէ զատ ուրիշ կատարելութիւններ կային արժանի մարդուս, և զինուորական փառասիրութենէ զատ՝ ուրիշ մեծութիւն: Չօրութեան, բռնութեան, յանգուգն գործառնութեանց՝ յաջորդեց իրմով բարեկարգութեան և արդարութեան սէրը: Խոհմութեան թելադրած դաշինքները՝ անաչառ արդարութիւն՝ ի գործ գրուեցան: Առնոսի նախկին աշխարհքին մէջ աւելի գեղեցիկ կերպով սկսան դարձեալ ծաղկել առաքինութիւնները՝ որոնք երկայն ժամանակէ ի վեր մոռցուած էին, և Հռոմայի որդւոց վրայ ամբնալու առիթ չունեցաւ:

Սակայն պարզ համոզելով կարելի չէր այսպիսի մեծ բաներ ձեռք ձգել. ուստի Նումա ուզեց այնպիսի իշխանութիւն մը առնել իրեն յերկնից՝ զորն որ մարդիկ պիտի ժխտէին իրեն. անոր համար կ'ըսուէր որ Եգեթիա յաւերժահարսը ծածուկ խոսակցութեանց միջոցը կը թելադրէր իրեն այն նոր օրէնքները՝ զորոնք Հռոմուլոսի օրինաց վրայ կ'աւելցընէր ինքը: Թերևս ինքը իրապէս յաստուածոց շնչուած էր, որոնցմէ կը բղնէ ամէն վէհանք մտածութիւն. կամ թերևս ներքի խաղութեամբ մը անոնց անունը կը յափշտակէր, որպէս զի սորվեցընէ մարդկանց զանոնք լաւագոյն կերպով պատուելու. սակայն ինչպէս ալ ըլլայ, Նումա այսպիսի մեծարոյ ու սրբազան աղբիւրէ մը այնպիսի իշխանութիւն մը ստացաւ՝ որուն մէջ կը չկրցաւ հակառակ կենալ. և արգար փոխադարձիւ մը՝ կրօնից նոր և շքեղ մեծութիւն մը տուաւ: Իրմէն հաստատուած քրմապետներ՝ կրօնից նորանոր կանոններ սահմանեցին անկախ ամենին ի մարդկային կամաց: Թէ ինչ կերպով իւրաքանչիւր աստուածներն ըստ իրենց բնութեանը պիտոյ աղերսենք, զոհելու ողջակէզները, այլ և այլ արարողութիւնները ինչուան իրենց մանրամասն պարագաներովը, այս ամէն բան նախատեսաւ չքով որոշեցին, և այս սրբազան օրէնքները մինչև ցայսօր իրենց առջի անարատութեամբ պահուած են ու ի գործ կը գրուին: Ժամանակը դիպուածով կրցեր է մասամբ մը հաւատքը այլայլել. սակայն օրինաց փաստ մը չ'ասուց:

Նումա կրօնից հաստատութիւն տալէն ետքը՝ ուզեց նաև փառաւորութիւն ալ աւելցընել վրան: Իմէն օր մէյմէկ բարեպաշտական կարգադրութիւն կը հաստատէր, և Հռոմայ պաշտամունքը շքեղապանծ արարողութիւններով այնպիսի փառաւորութիւն մը կը ստանար՝ որ անկէ առաջ չէր ունեցած: Տէրութեան ամենակարեւոր գործողութիւնները, խաղաղութիւնը, պատերազմը, զաշնագրութիւնները, քաղաքացւոց մէջ ըլլալու իրաւախոհութիւնները, աստուածոց կամքէն կը կախուէին, և անոնց հրամանները քրմաց ձեռքովը հաղորդուելով՝ ամբողջ ժողովրդեան մը օրէնք է դան:

Երկայն ու խաղաղ թագաւորութեամբ ժամանակ ունեցաւ այս իմաստուն թագաւորն որ սիրելի ընէ Հռոմայեցւոց այն սրբազան կապերը՝ որոնց մէջ որ զիրենք առեր էր. և շատ չնայ տեսաւ իր

չորս գին մարդկանց սերունդ մը, որոնք իրենց հարցը պէս արխաիրտ ըլլալէն զատ՝ քաղաքացւոյ տիրոջ անոնցմէ աւելի արժանի էին:

Նումային յաջորդներուն ժամանակը պատեւրազմական կտրըճութիւնը, որ երկայն ատենէ ճնշուած մնացած էր, նոր զօրութեամբ մը երեւան ելաւ: Հռոմ իր ճակատագրին գաղտնիքը թափանցելով, արագ քայլով մը կը փութար գէպ ի փառաւոր և ապահով նպատակ մը: Հաւնելով իր աստուածային օրինադրութիւններուն, ուզեց որ բոլոր իր գրաքիններն ալ անոնց մասնակցին, մինչև որ իր յաղթութիւններովը գինովցած, և կրօնական եռանդով մը վառուած՝ Կասպիտոնի կրթընէն հրատարակեց որ բոլոր աշխարհք իր պաշտամանն ու իր իշխանութեանը պիտի հպատակին: Չինուորական բարեկրթութիւնը, որ Հռոմայ մեծութեանը ամենամեծ պատճառ մը եղաւ, աւելի հաստատուն նեցուկ չունի քան զկրօնքը: Իւրաքանչիւր զինուոր՝ երբոր լեզէնի մը մէջ կը մանէ, երգմունք կ'ընէ իր գրօշը չթողու երբէք, և իր գլխաւորներուն հնազանդելու: Այսպիսի երգում մը տալէն առաջ՝ հրաման չունի պատերազմելու. բայց տալէն ետքը՝ այնպիսի խիստ պարտաւորութեամբ մը կապուած է, որ ալ քակել չկրնար զան: Երբոր ժողովուրդը սատիկ սրտամտութեամբ զայրացած՝ տասնապետաց դէմ ելաւ, լեզէնները՝ թէպէտ և բռնաւորաց դէմ նոյն ատելութեամբ լեցուած էին՝ դեռ անոնց հնազանդելու կը շարունակէին, ու չկրցան զանոնք թողու համոզուիլ. ինչուան որ իրենց չցուցուեցաւ որ անոնց իշխանութիւնը յափշտակութիւն մ'էր:

Ուրիշ նոյնպիսի պարագայի մը մէջ կարելի չէր զաւ զինուորները անօրէն կողմնակցութենէ մը քակել, բայց եթէ փոփոխելով անոնց գրօշները. որով ան ատեն աւելի հաւատարիմ մնալով իրենց երգման ձևին բաւերուն վրայ քան թէ իմաստին, հեղութեամբ անոնց ետեւէն գացին:

Կը շարունակուի:

Ազէկ նշան է երբոր տղայք առանց շատ յանգիմանութիւններու՝ իրենք իրենցմէ կը ճանչնան իրենց պակասութիւնը:

Տղան խօսքերէն առնուիլը՝ կը տկարացընէ ու անօգուտ կ'ընէ զյանգիմանութիւնը:

Աշկերտից թերութիւններուն վրայ տհաճութիւն ցուցուր, բայց ոչ բարկութիւն. ան ատեն առանց զայրանալու կ'ամբնայ ըրածին վրայ:

Ազգարարութիւններդ աւելի իբրեւ մրցանակ քան թէ իբրեւ պատիժ ըրէ տղայոց:

Խիստ խօսքէ մը ետքը սիրալիւր խօսք մը աւելցընելը՝ աւելի օգտակար է քան զնոյն իսկ յանգիմանութիւնը, և կամ քան զշարունակեալ քաղցրութիւնը:

Ոչ ծիծաղելով և ոչ խոժ ու գէմքով յանգիմանութիւն տուր:

ԴՈՄԱԶԷՈՑ